ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 Թ. ԱՊՐԻԼ - 2021 Թ. ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1) Մշակվել է «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», որոշման նախագիծը, որը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 8-ի N 1126-Ն որոշմամբ: Կազմվել են համապատասխան պայմանագրերը:
2) Ընդգրկվել է 1148 «Արտադպրոցական դաստիարակություն» բյուջետային ծրագրով նախատեսված 11001. «Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառում իրականացնող կազմակերպությունների կողմից 2021 թվականի ընթացքում իրականացվող միջոցառումների ընտրող հանձնաժողովի կազմում, հավաքագրվել, քննարկվել և ամփոփվել է ոլորտի կազմակերպություններից և նախարարության տարբեր ստորաբաժանումներից ստացված տեղեկատվությունը, կազմվել են համապատասխան պայմանագրերը:
3) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման N 12 հավելվածի 6-րդ կետը՝ մշակվել է 2021 թվականի պետական բյուջեի 1148. «Արտադպրոցական դաստիրակության ծրագիր» բյուջետային ծրագրի «11001. Արտադպրոցական դաստիարակություն» և «11016. ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների ռազմամարզական ճամբարների կազմակերպում» միջոցառումների միջև վերաբաշխման վերաբերյալ ծանուցումը: Կազմվել է նշված միջոցառման պայմանագիրը:
4) Կազմվել է նախարարության ենթակայության 1148 «Արտադպրոցական դաստիարակություն» բյուջետային ծրագրով նախատեսված 11019. «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում» միջոցառման պայմանագիրը:

5) Կատարվել է վերը նշված ծրագրերի գանձապետական ծախսերի նախահաշիվների, պայմանագրերի քաղվածքների մուտքագրում «CLIENT-TRESURY» համակարգ:
6) Կատարվել է ոլորտի կազմակերպությունների ամսական կամ ընթացիկ ֆինանսավորման հայտերի և հաշվետվությունների վերլուծություն, ֆինանսավորման հայտերի պատրաստում և ներկայացվել է փոխանցման:
7) Ընդունվել և ներկայացվել է հաստատման համակարգի հաստատությունների փոփոխված նախահաշիվները:
8) Հավաքագրվել, վերլուծվել է ոլորտում գործող կազմակերպությունների սաների, խմբերի, դրույքների նախնական և փաստացի թիվը, համադրվել է պայմանագրերում առկա տվյալների հետ, ըստ անհրաժեշտության կատարվել է վերահաշվարկ, կազմվել են համաձայնագեր:
9) Մասնակցել է ԿԳՄՍ նախարարության ենթակայության բյուջետային և ՄԺԾԾ հայտերի լրամշակմանը,
10) Մասնակցել է կրթության, գիտության ոլորտի բյուջետային գործընթացի շրջանակում տարեկան բյուջետային ոչ ֆինանսական չափորոշիչների մշակման աշխատանքների կազմակերպմանը,
11) Մասնակցել է Նախարարության համակարգում ֆինանսական կառավարման արդյունավետ համակարգերի առկայության, Նախարարության տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկություններինը:
12) Այլ ընթացիկ աշխատանքներ՝ կազմվել է գրություններ, տրամադրվել է պահանջվող տեղեկատվություն, պատասխանվել է ստացված մի շարք գրությունների:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ

ՓՈՐՁԱԳԵՏ՝ ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

23 հուլիս 2021 թ.